

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2007 թվականի հոկտեմբերի 6-ի

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր, համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Մաքսային միության բարձրագույն մարմինը սահմանում է Մաքսային միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի ցանկը (այսուհետ՝ Ցանկ), որը բաղկացած է երկու մասից՝

մաս առաջին՝ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում գործող միջազգային պայմանագրեր,

մաս երկրորդ՝ միջազգային պայմանագրեր, որոնք ուղղված են Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորումն ավարտին հասցնելուն:

Հոդված 2

Մաքսային միության բարձրագույն մարմինը որոշում է ընդունում Ցանկի երկրորդ մասում ներառված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու վերաբերյալ՝ ավանդապահի մոտ Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերի կատարման մասին տեղեկատվության առկայության պարագայում, որոնք անհրաժեշտ են տվյալ միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար:

Հոդված 3

Եթե Կողմը դուրս է գալիս Ցանկի երկրորդ մասում ներառված որեւէ միջազգային

պայմանագրից, ապա այն ենթադրում է, որ այդ Կողմը դուրս է գալիս Յանկի երկրորդ մասում ներառված բոլոր մյուս միջազգային պայմանագրերից: Այդ պայմանագրերի գործողությունը դադարում է տվյալ Կողմի համար ավանդապահի կողմից պայմանագրից դուրս գալու մասին ծանուցումն ստանալուց հետո 12 ամիսը լրանալուն պես:

Հոդված 4

Ուժի մեջ մտնելուց հետո Յանկի երկրորդ մասում ներառված միջազգային պայմանագրերը բաց են՝ Եվրասիական տնտեսական համայնքի մյուս անդամ պետությունների կողմից դրանց միանալու համար՝ պայմանով, որ միացող պետությունն իր համաձայնությունն է տալիս Յանկի երկրորդ մասում ներառված բոլոր միջազգային պայմանագրերն իր համար պարտադիր լինելու վերաբերյալ:

Պայմանագրին միացող պետությունների համար նշված միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միաժամանակ՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումներն այդ պետության կողմից ավանդապահին ներկայացնելուց հետո երեք ամիսը լրանալուն պես:

Հոդված 5

Ցանկում ներառված միջազգային պայմանագրերի դրույթները վնաս չեն հասցնում Կողմերի միջեւ կնքված՝ այլ միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքներին եւ պարտավորություններին, եթե նման պայմանագրերով նախատեսվում է Կողմերի ինտեգրման առավել բարձր մակարդակ:

Ցանկում ներառված միջազգային պայմանագրերի դրույթները չեն խոչընդոտում Կողմերի միջեւ այլ միջազգային պայմանագրերի կնքումը, եթե դրանք բավարարում են նշված պայմանները:

Հոդված 6

Սույն Արձանագրությունից վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 7

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման ամսաթվից, ենթակա է վավերացման եւ ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից վավերացման մասին վերջին փաստաթուղթն ստանալու ամսաթվից:

Կատարված է Դուշանբե քաղաքում, 2007 թվականի հոկտեմբերի 6-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն է՝ նախքան Մաքսային միության հանձնաժողովի ավանդապահի գործառույթները փոխանցելը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության կողմից՝

(Ստորագրություն)

Ղազախստանի
Հանրապետության կողմից՝

(Ստորագրություն)

Ռուսաստանի
Դաշնության կողմից՝

(Ստորագրություն)
